ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2016թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2016 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.451-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող՝ Դ.Անհաղթի փող. հ.6 շենքի հ.45՝ 16,0քմ ընդհանուր մակերեսով բնակարանը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 30.08.2016թ. հ.30082016-01-0169 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Գրետտա Սումբաթյանին և Գեորգի Սումբաթյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ -ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Դ. Անհաղթ փող. հ.6 շենքի հ.45՝ 16,0 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Գրետտա Սումբաթյանին և Գեորգի Սումբաթյանին:

Քննարկվող բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 30.08.2016թ. հ.30082016-01-0169 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Գրետտա Սումբաթյանը և Գեորգի Սումբաթյանը հանդիսանում են Ադրբեջանից բռնագաղթված անձինք /հիմք՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից 11.07.2016թ. տրված հ.01/11/1904-16 և 24.09.2016թ. տրված հ.01/11/2726-16 տեղեկանքներ/:

Համաձայն ՀՀ ոստիկանության ԱՎ վարչության Քանաքեռ-Զեյթուն անձնագրային բաժանմունքի կողմից 23.08.2016թ. տրված հ.22/5-1807 տեղեկանքի՝ Գրետտա Սումբաթյանը և Գեորգի Սումբաթյանը 2009 թվականից փաստացի հաշվառված են Դ.Անհաղթ փող. հ.6 շենքի հ.45 հասցեում:

Ըստ «Ապավեն» համատիրության նախագահի կողմից 16.09.2016թ. տրված տեղեկանքի՝ Գրետտա Սումբաթյանն 2000 թվականից բնակվում է Դ. Անհաղթի փող. հ.6 շենքի հ.45 հասցեում, իսկ 2007-2009 թվականներին բնակվել է իր նախկին ամուսնու՝ Գեորգի Սումբաթյանի հետ միասին: Վերջիններս ամուսնալուծվել են /հիմք՝ 18.07.2014թ. հ.031371 ամուսնալուծության վկայական/, սակայն ներկայացրել են համաձայնագրեր, որ համաձայն են քննարկվող բնակարանը մասնավորեցվի իրենց երկուսի անվամբ:

ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի կողմից 11.08.2016թ. տրված հ.ԷԱ-2/6317 տեղեկանքի՝ Գրետտա Սումբաթյանի անվամբ ՀՀ-ում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և վերջին հինգ տարվա ընթացքում որևէ անշարժ գույքի օտարման և ձեռք բերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի կողմից և 23.09.2016թ. հ.ԷԱ-2/7629 տեղեկանքի՝ Գեորգի Սումբաթյանի անվամբ վերջին հինգ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2015թ. դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշման հավելվածի /ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ